ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2013 թվականի թիվ 70- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ <ԱՅՐՈՒՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ> ՓԲԸ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՆՁԱՓԱՐ ՍԱՐԱՏԻԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով , <Բաժնետիրական ընկերությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <թ>կետով՝

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի < Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 7-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության <Այրումի գյուղական բժշկական ամբուլատորիա> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2013թվականի հունիսի 4-ի <Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին> թիվ 3 որոշումը, եզրակացությունը և Գ.Սարատիկյանի 2013 թվականի հունիսի 4-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2013 թվականի հունիսի 6-ից դադարեցնել <Այրումի գյուղական բժշկական ամբուլատորիա> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Գանձափար Սարատիկյանի հետ 19.03.2013թ. կնքած աշխատանքային պայմանագիրը:

2. Գանձափար Սարատիկյանին 2013 թվականի հունիսի 6-ից նշանակել <Այրումի գյուղական բժշկական ամբուլատորիա> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր չորս տարի ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. հունիսի 6
ք.Իջևան